ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ԱՐԱՐԱՏ ՔԱՀԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԵՌԵԼՈՅԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 օգոստոսի 2011 թ.)

«Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան.
սերմանի անարգութեամբ՝ եւ յառնէ փառաւք.
սերմանի տկարութեամբ՝ եւ յառնէ զաւրութեամբ.
սերմանի մարմին շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր:
Եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ եւ հոգեւոր»
(Ա. Կորնթ. ԺԵ:42-43)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, երեկ Հայ եկեղեցին տոնում էր մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որին որպես տաղավար տոնի հաջորդում է մեռելոցը:

Քիչ առաջ վկայակոչելով Ս. Պողոս առաքյալի խոսքերը, ցույց տվեցինք մարդկային մարմնի ներկա ու ապագա վիճակները, ինչպես ասում է նույն առաքյալը. «Եղբայրնե՛ր, ուզում ենք, որ մեռածների մասին ճշմարտությունն իմանաք, որպեսզի չտխրեք ուրիշների նման, որոնք որեւէ հույս չունեն, որովհետեւ եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ եւ հարություն առավ, նույնպես եւ հավատում ենք, որ Աստված Հիսուսի միջոցով եւ նրա հետ վերստին կյանքի կրերի նրանց, որոնք նրան հավատացին եւ մեռան»: Առաքելաբարբառ այս խոսքերն ուղղված են մեզանից յուրաքանչյուրին, որպեսզի մեզանից ոչ մեկը անհավատ չլինի հավիտենական կյանքի նկատմամբ:

Քիչ առաջ վկայակոչված ավետարանական խոսքերը մեզ հայտնում էին մարդկային մարմնի այժմյան եւ լինելիք վիճակների մասին: Սակայն ամենքիս քաջ հայտնի է նաեւ մարդկային մարմնի անցյալ վիճակը: Ծննդոց գիրքը պատմում է. «Աստված ասաց. “Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ... Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան”»: Ահա այստեղից մենք իմանում ենք, որ մարդու իրական պատկերն աստվածային էր: Սակայն մարդը չպահեց այդ պատկերը, այլ արհամարհելով այն՝ հրաժարվեց, իսկ Աստված տեսնելով մեր հողեղեն արարածներիս հանդգնությունը՝ զրկեց մեզ մեր՝ նախնական աստվածանմանությունից եւ իր պատկերն ու նմանությունը լինելու մեծագույն պատվից, որին ողջ Արարչագործության մեջ միայն մարդն էր արժանացել: Այս է պատճառը, որ անմահության հունդը կրող մարդը զրկվեց անմահությունից եւ դարձավ մահկանացու. «որովհետեւ հող էիր եւ հող էլ կդառնաս»,- ասում է Սուրբ Գիրքը:

Սակայն անմահությունից զրկված մարդը երբեք չլքվեց Աստծո կողմից համաձայն Իր իսկ խոսքի. «Եւ ահա ես միշտ ձեզ հետ կլինեմ, մինչեւ աշխարհի վախճանը», եւ չնայած այս ամենին մենք այլեւս ձեռք չբերեցինք անմահություն: Սակայն Աստծո Միածին Որդու մարդեղացմամբ մարդկությունը հնարավություն ստացավ վերագտնելու իր աստվածադիր պատկերը: Հարության հույսի հետ միասին մարդկությունը ստացավ իր մարմինը նորոգելու աստվածապարգեւ շնորհը, քանի որ Թ-աբոր լեռան վրա Քրիստոսի Դայծառակերպությամբ ոչ միայն նրա Աստվածությունը հայտնվեց, այլեւ կատարյալ մարդկությունը, իսկ վերջինը շատ կարեւոր է մեր համար, քանզի մենք ամենքս պետք է իմանանք, որ այս չէ մեր իրական մարմինը, որ այս չէ մեր իրական վիճակը, ինչպես որ ցորենի հատիկն իր մեջ պարունակում է հասկը, այնպես էլ մեր այս ներկա մարմինն իր մեջ պարունակում է այլակերպված մարդուն, որին հասնելու համար մենք պիտի շարունակենք կատարելագործվել: Իսկ եթե մենք մեր ներկա մարմինը եւ վիճակը նույնացնենք, ապա այն ժամանակ մարդը պիտի կառչած մնա աշխարհայինից, իսկ նման պարագային Պողոս առաքյալն ասում է. «ուտենք, խմենք, քանզի վաղը մեռնելու ենք»: Սակայն իրականությունն այլ է, գոյություն ունի մարդեղության մեկ ուրիշ երես, որ մարդ կարող է իր Աստծով աստվածանալ, բոլորիս քաջ հայտնի է իրապես այն մեծ խորհուրդ պարունակող խոսքը, որն ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Իսկ աստվածացած մարդու մարմինը նույնը չէ, ինչ որ մեր ներկա մարմինը, այն պիտի փոխարերվի մեր այս մարմնից, այն պիտի այլակերպվի, պայծառակերպվի, մարդու մարմինը անկասկած պիտի ունենա իր Թ-աբոր լեռը, որտեղ ի ցույց կդրվի իրական մարդկային մարմինը, այն, որ պիտի միահյուսվի աստվածայինի հետ, ինչպես երբ որ մարդ իր հին հագուստը հանելով հագնում է բոլորովին նոր հագուստ՝ վերափոխելով իր արտաքին տեսքը, բայցեւ իր ներքին էությունը՝ զգալով նորի շունչը, այնպես էլ մարդը հարություն առնելիս մի կողմ պիտի նետի իր հին մարմինը եւ հագնի նորը «որովհետեւ պէտք է, որ այս ապականացու մարմինը անապականութիւն կրի, եւ այս մահկանացու գոյութիւնը հագնի անմահութիւն»,-ասում է Պողոս առաքյալը:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, եկեք չմոռանանք թե ում ստեղծածներն ենք, թե ինչպիսի պատվի արժանացանք Դրախտում եւ ինչ կորուստ ունեցանք երկրում, եկեք չմոռանանք, որ անմահությունից զրկվելով դարձանք մահկանացու, բայցեւ չմոռանանք, որ Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսով նորից ստացանք հարության հույսը, որ Քրիստոսի Հարության լույսի ուժով մենք եւս հարություն պիտի առնենք եւ Պողոս առաքյալի նման բարձրաձայն աղաղակենք. «Եւ երբ մեր այս եղծանելի բնությունը փոխվի անեղծ բնության, եւ այս մահկանացու բնությունը փոխակերպվի անմահ բնության, այն ժամանակ կիրականանա գրված մարգարեությունը, որ ասում է.

"Մահը կլանվեց, հաղթանակը նվաճվեց:
Ո՞ւր է, մահ, քո հաղթանակը,
ո՞ւր է, մահ, քո խայթոցը":

Մահվան խայթոցը մեղքն է, իսկ մեղքն իր ուժը ստանում է Օրենքից: Բայց փառք Աստծու, որ մեզ հաղթանակ պարգեւեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով»:

Շնորհք, սեր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ամենեսեսեանդ. ամեն...